

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՆՈՒՇ ՄՈՒՇԵՂԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ժ.01.02-«Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2020

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
ԱԵԼԻՏԱ ԳՈՒՐԳԵՆԻ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
ՄԱՐՏԻՆ ԳԱՐԵԳԻՆԻ ԳԻԼԱՎՅԱՆ
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
ԿԱՐԻՆԵ ՀԱՄԼԵՏԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Խաչատուր Աբովյանի անվան
պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2020թ. նոյեմբերի 20-ին՝ ժամը 12:30, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Ա.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է հոկտեմբերի 2-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

բանասիրական գիտությունների թեկնածու՝

 Ա.Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարի բազմաժանր հեղինակ Հովհաննես Ղուկասյանի ստեղծագործության ուսումնասիրությանը, ում կենսափորձը մեծ դեր է խաղացել նրա ստեղծագործության ուղղվածության, արծարծած թեմաների ընտրության հարցում, մասնավորապես՝ հայրենասիրության լայն ընդգրկման մեջ: Ներգաղթը Սովետական Հայաստան գրողի համար դառնում է հոգևոր վերածնունդ՝ առավել արժևորելու հայրենիքն ու նրա դերը յուրաքանչյուր հայի համար, ինչն էլ իր արտացոլումն գտել է նրա արձակ և չափածո ստեղծագործություններում:

Ատենախոսության մեջ փորձ է արվում վերլուծել Հ. Ղուկասյանի՝ բանաստեղծության, վիպասանության, մասնավորապես՝ պատմավիպասանության, պատմվածքի, մանկագրության, բանահյուսական հենքով գրված ստեղծագործությունների՝ հեքիաթի, բալլադի, առակի ժանրերով գրված ստեղծագործությունները:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ

Հովհաննես Ղուկասյանի ստեղծագործության ուսումնասիրությունը կարևոր է դիտարկել ժամանակի գրական-գեղարվեստական զարգացումների համապատկերում:

Փորձ է արվել մեկնաբանել այն՝ զանց չառնելով ժամանակի գրական զարգացումների վերաբերյալ գրականագիտության քննության տեսանկյունից արված որոշ դիտարկումներ և գնահատականներ (վերջիններս խիստ սակավ են և չեն բացահայտում հեղինակին ամբողջությամբ):

Թեմայի ընտրությունը արդիական է և լրացնում է կարևոր բաց, որովհետև փորձ է արվում ոչ միայն ներկայացնել Հ. Ղուկասյանի գրական ժառանգության համապարփակ բնութագիրը, այլև հատկապես ընդգծել պատմավիպասանության մեջ նրա ունեցած վաստակի կարևորությունը, քանի որ գրական կերպավորման ենթարկելով հայ նշանավոր հոգևոր-մշակութային գործիչների կյանքը՝ հեղինակը հարստացնում է հայ գրականությունը:

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՌԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան Հովհաննես Ղուկասյանի ամբողջական ստեղծագործությունն է:

Ատենախոսության նպատակն է ցույց տալ նրա գրապատմական-գեղարվեստական արժեքն ու դերը ժամանակակից հայ գրականության մեջ:

Ուսումնասիրության գլխավոր խնդիրն է ոչ միայն վեր հանել Ղուկասյանի ստեղծագործությունը, այլև ներկայացնել տարբեր ժանրերի մեջ հեղինակի գրական դրսևորումները, բացահայտել դրանցից յուրաքանչյուրի դերն ու ու նշանակությունը:

ՏԵՍԱԿԱՆ ՌԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ուսումնասիրությունը կատարելիս կիրառվել են գեղարվեստական երկի գիտական մեկնության վերլուծական, կենսագրական, երբեմն նաև համեմատական մեթոդները, որոնց միջոցով դիտարկվել են ատենախոսության շրջանակներում քննարկվող թեմաները: Հիմնականում նյութը ներկայացվում է բնագրի կոնկրետ վերլուծությունների հիման վրա, ուստի առկա են որոշակի թվով բնագրային մեջբերումներ:

Աշխատության համար տեսական հիմք են ծառայել մի շարք գիտատեսական գրքեր, այդ թվում ժամանակի մեծավաստակ գրականագետների՝ Ս. Արզումանյանի, Ս. Աղաբաբյանի, Ստ. Թոփչյանի հպանցիկ վերլուծությունները հեղինակի որոշ ստեղծագործությունների, հիմնականում պատմավեպերի վերաբերյալ: Հ. Ղուկասյանի պատմական թեմաներով ստեղծագործությունները համեմատել ենք դրանց մատենագիտական սկզբնաղբյուրների, մասնավորապես՝ հայ պատմիչների երկերի հետ, որոնք արտացոլում են ներկայացված պատմական ժամանակաշրջանը, հայ առաջին տպագրիչների գործունեությունը, նրանց կրած դժվարությունները, որոնց մասին հրաշալի նյութ են ծառայել նրանց ձեռքով գրած և տպագրված գրքերի հիշատակարանները: Օգտագործված են նաև հայ տպագրության պատմությանը նվիրված աշխատությունները: «Բոգդան Սալթանով» վեպի ուսումնասիրության համար օգտագործվել են նաև մի շարք ռուս պատմաբանների և հետազոտողների ուսումնասիրությունները, տեսական գրականություն, արխիվային փաստաթղթեր: Մյուս ժանրերի ստեղծագործություններում՝ բանաստեղծություններում, հեքիաթներում, բալլադներում, առակներում, հետազոտված են դրանց համար սկզբնաղբյուր ծառայած բնագրերը՝ համեմատական քննությամբ:

**ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ,
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Հետազոտության գիտական նորույթն ու առանձնահատկությունը հետևյալն է՝ առաջին անգամ ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրվում է Հովհաննես Դուկասյանի ստեղծագործությունը՝ այն քննելով իր բազմաժանր դրսևորումներով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը քննարկվել և հանձնարարվել է հրապարակային պաշտպանության ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Նորագույն շրջանի հայ գրականություն բաժնում: Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլող հոդվածները լույս են տեսել հանրապետության գիտական պարբերականներում (տե՛ս հրապարակումների ցանկը սեղմագրի վերջում):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 5 գլուխներից, որոնք իրենց հերթին բաղկացած են ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկերից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ տրված է աշխատանքի ընդհանուր բնութագիրը՝ ներառելով ատենախոսության հիմնական դրույթները, արտացոլված է հարցի պատմությունը: Ներկայացված են ուսումնասիրության առարկան, նպատակն ու խնդիրները, թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, մեթոդաբանությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Այս գլխում ներկայացվում է Հ. Ղուկասյանի բանաստեղծական ժառանգության վերլուծությունը՝ բացահայտելով հեղինակին թե՛ որպես գրական ասպարեզ մտնող գրողի, թե՛ վերլուծելով այս շրջանի ստեղծագործությունների իրական թերութունները, քանի որ Ղուկասյան հեղինակի համար բանաստեղծությունը լոկ նրա գրական ընթացքի սկիզբն է: Բանաստեղծության հիմնական թեման հայրենասիրությունն է, նախ և առաջ՝ հայրենադարձությունը՝ ելնելով իր կենսափորձից, մյուս կողմից՝ համակված ժամանակաշրջանի պոեզիայի հիմնարար հարցադրումներով: Իսկ «խորհրդային ժողովրդի հայրենասիրական զգացմունքների վերելքն արտահայտելու համար բանաստեղծները պատերազմի սկզբնական շրջանում դիմեցին առավելապես կոչի, պատգամախոսության, հրովարտակի, «բարի երթի» ուղերձի բանաստեղծական տեսակներին: Բանաստեղծական պատկերային համակարգում տեղ գտան կռվի հրավերն ու վրեժի պատգամը, հերոսական գովքն ու հայրենի հողը պաշտպանելու կանչը»:¹ Ժամանակի նման մտածողության մեջ Հ. Ղուկասյանը իր խոսքն է փորձում ասել մյուս բանաստեղծների կողքին, ինչը մանրամասնորեն վերլուծված է այս գլխում:

Ընդհանուր առմամբ Հովհ. Ղուկասյանը իր գրական տաղանդը ավելի լայն ու ընդգրկուն է ներկայացրել արձակում, իսկ նրա բանաստեղծությունները սրտի խոսքն են աշխարհին: Նրա բանաստեղծություններին բնորոշ են հետևյալ թեմատիկ բաժանումները՝ հայրենադարձություն, հայրենասիրություն, Հայրենական պատերազմ, սեր, ներաշխարհը ներկայացնող բանաստեղծություններ:

«**Հայրենիքում**» շարքում Ղուկասյանը հայրենիքը համարում է իր հայրը՝ բազմիցս կրկնելով. «Հա՛յր, երդվում եմ Քեզ»... Բանաստեղծի մոտ առկա է մի կարևոր հոգեվիճակ, հույզ. նա գնահատում է ներկան, գնահատում է այն, որ էլ պանդուխտ չէ օտար ափերում: Գաղափարական այս թելը պտտվում է շարքի գրեթե բոլոր բանաստեղծությունների մեջ: Հ. Ղուկասյանի հայրենասիրական երգերից երևում է, որ Հայաստանը նրա կյանքն է, նրա սերը, էությունը, տունն ու օջախը, ծնողն ու որդին:

«**Հայրենական պատերազմին**» շարքում Հովհաննես Ղուկասյանը տուրք է տալիս խորհրդային ժամանակների գաղափարական դրոշմներին և մեր ժողովրդի

¹ Աղաբաբյան Ս., Արդի հայ գրականության պատմություն, հ. 2, Երևան, 1993, էջ 33-34:

Առաջնորդը համարում է Կրեմլի ձայնը, Ռուսաստանը՝ անձիր տափաստան: «Կովկասյան լեռներում» բանաստեղծության մեջ մեր ժողովրդի կամքը համեմատում է Կովկասյան լեռների անմատչելիության հետ. նա գոչում է ի ցույց աշխարհի, որ

Ազա՛տ է աշխարհն իմ սովետական,

Ազա՛տ է եղել, ազատ էլ կապրի.... (էջ 30)

«**Խառն երգեր**»-ի մեջ արդեն ուրվագծվում են այլ մոտիվներ: «Մրգահասի երգը» բանաստեղծության մեջ, օրինակ, ներկայացվում է մրգահասը. ոսկեհատիկ վազերի տակ կյանքն է բուրում, բերքը քաղցր է, անգամ վազերն են «երգում»... Այս ամբողջ պատկերը հեղինակը համեմատում է իր երգերի, իր ստեղծագործությունների հետ: Սակայն այստեղ էլ հեղինակը կաղում է բանաստեղծության կառուցվածքի, պոեզիայի տաղաչափության հարցում. կա արհեստական հանգավորում՝ առաջացնելով մտքի ոչ սահուն ընկալում:

Իր բանաստեղծություններով Հովի. Ղուկասյանը նոր խոսք չի ասել հայ քնարերգության մեջ: Նրա ստեղծագործության այդ շրջանը զուտ նախապատրաստում էր ուշագրավ արձակ գործերի երևան գալը:

Ուշագրավ է նրա բանաստեղծական աշխարհին, լեզվին և ստեղծագործական առաջին շրջանին տրված գնահատականը. «Պոեզիայի լեզուն, ընդհանուր առմամբ, մաքուր է, գրական: Պոետը ձգտել է օգտագործել ժողովրդական արվեստի ոճի և ձևերի լավագույն օրինակները, որը նրա մոտ լիովին հաջողվում է: Այնուամենայնիվ, ժողովածուում տեղ են գտել որոշ թույլ, ոչ արտահայտիչ բանաստեղծություններ: Ի դեմս Հ. Ղուկասյանի՝ խորհրդային հայ գրականությունը, անկասկած, ունի խոստումնալից բանաստեղծի»²:

² Мнацаканян Г., Голос нового советского гражданина, Коммунист, 1948, 19 авг, с. 3. ("Язык стихов в общем чист, литературен. Поэт стремился использовать лучшие образцы стиля и форм народного творчества, что ему вполне удастся. Однако в сборнике нашли место отдельные слабые, невыразительные стихи. В лице Ованеса Гукасяна советская армянская литература, несомненно, имеет многообещающего поэта").

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ ՎԻՊԱՍԱՆ

Խոսել Հովհաննես Ղուկասյանի՝ որպես վիպասան հանդես գալու մասին, նշանակում է նախ և առաջ անդրադառնալ նրա պատմավիպասանությանը: Տեղին է հիշատակել, որ «հայ ժողովրդի պատմության հին ու նոր ժամանակների աններդաշնակությունը, տևական լարվածությունը ամբողջությամբ սեփականել է ժանրը, փորձել է դրվատել հերոսական անցյալը, ստեղծել բարձր, ուղենիշ-գաղափարատիպեր՝ խնդիր ունենալով հակադրվել, հուշել, ուսուցանել, կողմնորոշել ներկան: Թերևս նաև դա է պատճառը, որ մեր բոլոր գրողները, առանձին բացառություններով, անդրադարձել են պատմական թեմատիկային, կամ էլ ունեցել են այն որպես ստեղծագործական ծրագիր, որպես «հոգու պարտք»: Պատճառը, այսպիսով, հայ գրականության համար կայուն և հարատև գործոն է եղել, իսկ առիթը՝ նոր ժամանակների տեղատվությունները, որոնք կրկնվել են մշտապես: Այնպես որ պատմության թեմայով գրվող երկը մեզանում կարող էր ծնվել ժամանակի ընդհանուր տարածության ամեն մի կետում»:³

Հովհաննես Ղուկասյանն այս առումով իր պատմավիպասանության նյութը դարձրել է միջնադարի հոգևոր-մշակութային հայ գործիչների կյանքը՝ նրանց օրինակով մեր օրեր բերելով մաքառումի, նվիրվածության, գործին հավատարիմ լինելու և մեծ հայրենասերների ուշագրավ կերպարներ:

Ատենախոսության այս գլխում՝ «Հովհաննես Ղուկասյանը վիպասան», ներկայացվում է նրա ստեղծագործության էական մասը՝ պատմավիպասանությունը, պատմական թեմայով գրված պատմվածքները:

2.1. Պատմական հիմքը Հ. Ղուկասյանի «Ոսկան Երևանցի» վեպում

Այս ենթագլխում խոսվում է այն հիմնական աղբյուրների մասին, որ օգտագործել է Հ. Ղուկասյանը «Ոսկան Երևանցի» պատմավեպը գրելիս:

Հովհ. Ղուկասյանը ընտրել է որոշակի պատմական դեպքեր, անձնավորություններ, պահպանել է նկարագրած երևույթների պատմական հիմքը: Իհարկե, հեղինակը տառացիորեն չի հետևել պատմական փաստերին և որպես արվեստագետ շատ հաճախ իր մեկնաբանություններն է տվել, սակայն հիմնականում հարազատ է մնացել պատմությանը: Վեպի գլխավոր աղբյուրներն են Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց», Ոսկան Երևանցու ձեռքով տպագրված գրքերի՝ «Աստվածաշնչի», «Շարակնոց»-ի հիշատակարանները, ինչպես նաև Խաչատուր Կեսարացու, Մատթեոս

³ Ավետիսյան Զ., Հայ պատմավեպի պոետիկան, Երևան, 1986, էջ 6:

Ծարեցու և այլոց կողմից հրատարակված գրքերի հիշատակարանները: Կան նաև մի շարք պատմական աշխատություններ, որոնք պարունակում են հայ ժողովրդի պատմության այդ ժամանակահատվածին բնորոշ նկարագիրը՝ բավականաչափ հարուստ նյութ տալով հայ ժողովրդի պատմության վերաբերյալ (Հարութին Տեր-Հովհանյանց, Պատմութիւն Նոր Ջուղայոյ որ յԱսպահան, հ.1, Նոր Ջուղա, 1880⁴, Խ. Նորջուղայեցի, «Պատմութիւն պարսից»⁵ և այլն): Ինչպես նաև օգտագործել է եվրոպական, օտարալեզու սկզբնաղբյուրներ: Կարևոր աղբյուր են նաև հայ տպագրության պատմության հետազոտողների՝ Լեոյի, Գ. Զարբհանայանի, Թեոդիկի, Գարեգին Լևոնյանի, Ռաֆայել Իշխանյանի ուսումնասիրությունները:

2.2. Կերպարային համակարգը Հ. Ղուկասյանի «Ոսկան Երևանցի» պատմավեպում

«Ոսկան Երևանցի» պատմավեպը շատ արժեքավոր է ոչ միայն իր պատմագիտական, ճանաչողական արժեքով, այլև գեղարվեստական տեսանկյունից, կերպարային կուռ համակարգով: Պատմավեպում առանձնանում են բազմաթիվ պատմական-իրական անհատներ՝ հայ իրականությունից՝ Ոսկան Երևանցին, Առաքել Դավրիժեցին, Խաչատուր Կեսարացին, Սիմեոն Ջուղայեցին, Զաքարիա Ագուլեցին, Զաքարիա Քանաքեռցին, նկարիչ Մինասը, համաշխարհային դեմքերից՝ փիլիսոփա Սպինոզան, գրական «մաքսիմ»ների հայտնի հեղինակ Ֆրանսուա դը Լարոշֆուկոն, Լյուդովիկոս կայսրը, հանճարեղ նկարիչ Ռեմբրանդտը, Ռասինը, ճիզվիտական աշխարհից՝ Գլելուն, Պիրոնային, Ալֆոնսո դել Սարտեն, Արքանջելոն և այլն: Սա նշանակում է մի տեսադաշտ, որը ներկայացնում է դարի քաղաքական, մշակութային, կրոնական հարաբերությունների յուրօրինակ միահյուսվածություն, որի միջոցով առավել տեսանելի է դառնում Ոսկան Երևանցու գործունեության ազգային արժեքը:

Վեպի գեղարվեստական գլխավոր խնդիրը, բնականաբար, կապվում է Ոսկան Երևանցու կերպարի հետ: Նա այն լուսավոր անհատներից է, որ հանուն նպատակի անձնագրհույան է դիմում՝ մի կողմ դնելով իր անձը, իր սերը:

Այս ենթագլխում քննության են առնվում Ոսկան Երևանցու և նրան առնչվող կերպարների հոգեբանական նկարագրերն ու զուգահեռները, գաղափարական և արժեհամակարգային հիմնահարցերը: Կարևորվում է առանցքայինը՝ ինչու է վիպասանը դիմում պատմական անցյալին, հերոսներ վերցնում պատմամշակութային

⁴ Հարութին Տեր-Հովհանյանց, Պատմութիւն Նոր Ջուղայոյ որ յԱսպահան, հ. 1, Նոր Ջուղա, 1880, 497 էջ:

⁵ Խաչատուր Աբեղայի Ջուղայեցոյ, Պատմութիւն պարսից (ԺԸ դար), Վաղարշապատ, 1905, 371 էջ:

անցյալից, որն է նրա նպատակը: Սրանով պատմավիպասանը ևս մեկ անգամ հաղորդում է այն կարևոր ճշմարտությունը, որ հայ ժողովուրդը իր գոյությունը պահպանել է ոչ միայն հերոսամարտերով, ռազմական պայքարով, այլև արվեստով, հոգևոր-մշակութային արժեքներով և դրանք արժևորող ու դրանց համար իրենց կյանքը նվիրաբերող այնպիսի անհատներով, ինչպիսին էր, օրինակ, Ոսկան Երևանցին:

2.3. Պատմական հիմքը Հ. Ղուկասյանի «Բոգդան Սալթանով» վեպում

Այս ենթագլխում մանրամասնորեն ներկայացվում է, թե ինչ մեծ ուսումնասիրություններ է կատարել Հ. Ղուկասյանը՝ գրելու «Բոգդան Սալթանով» պատմավեպը՝ հավաստիորեն պահպանելով վեպի պատմական հիմքը: Ինչպես «Ոսկան Երևանցի»-ն, այնպես էլ «Բոգդան Սալթանով» երկը վերաբերում են հոգևոր-մշակութային գործիչների կյանքի և առաքելության նկարագրմանը: Ճիշտ է նկատել Ս. Արզումանյանը, որ ««Բոգդան Սալթանով» երկի մտահղացումը հաստատում է վիպասանի նախասիրությունը հայ հոգևոր արվեստի, նրա մշակութային հարուստ անցյալի վերաբերյալ»:⁶ Այն լույս է տեսել 1980թ. և թեմատիկ շատ ընդհանրություններ ունի «Ոսկան Երևանցի» ստեղծագործության հետ՝ միջավայրն ու ժամանակը՝ 17-րդ դարի Ջուղան, հայերի ազատագրական մաքառումները, գլխավոր հերոսների՝ իրենց նպատակին ու առաքելությանը հասնելու անհողողող կամքը, նրանց անցած դժվարին ճանապարհը, ինչպես նաև հեղինակի գրելաոճն ու ստեղծագործական մոտեցումը:

Այսպիսի վեպ գրելու համար հեղինակը կատարել է մեծածավալ ուսումնասիրություններ: Աստվածատուր Սալթանյանի կյանքի և գործի մասին շատ քիչ տեղեկություններ են հասել: Հիմնականում փաստեր են պահպանվել արխիվային սակավաթիվ վավերաթղթերում, ինչպես նաև հերոսի անձը ուսումնասիրվել և քննության է ենթարկվել մի շարք հետազոտողների կողմից: Այսպես, Աստվածատուր Սալթանյանի կյանքի և գործունեության ուսումնասիրությունը տեսնում ենք Եղիշե Մարտիկյանի «Հայկական կերպարվեստի պատմության»⁷ մեջ, հայտնի է Մանյա Ղազարյանի ու Վազգեն Ոսկանյանի «Բոգդան Սալթանով»⁸ մենագրությունը, ինչպես նաև Բոգդանին է նվիրված Մանյա Ղազարյանի «Հայ կերպարվեստը 17-18 դարերում» գրքի մի գլուխ⁹: Անկասկած, այդ հետազոտությունները հենված են արխիվային փաս-

⁶ Արզումանյան Ս., Արդի հայ վեպը, հ. 5, Երևան, 2004, էջ 270:

⁷ Մարտիկյան Ե., Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Ա, Երևան, 1971, էջ 42-48:

⁸ Ղազարյան Մ., Ոսկանյան Վ., Բոգդան Սալթանով, Երևան, 1986:

⁹ Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը 17-18 դարերում, Երևան, 1974, էջ 50-96:

տաթղթերի վրա, որոնցում տեղեկություններ են պահպանվել Բոգդան Սալթանովի մասին: Դրանք հրատարակվել են “Армянско- русские отношения в 17 веке”(1953)¹⁰, որում էլ զետեղված են վաճառական Ջաքարի հայերեն նամակները՝ ուղղված Ալեքսեյ ցարին: Վերջին ժողովածուն չափազանց մեծ կարևորություն ունի վեպի պատմական հավաստիությունը հաստատելու հարցում, որն, անշուշտ, ուսումնասիրվել է Հ. Ղուկասյանի կողմից:

Բոգդան Սալթանովի կյանքի մասին տվյալներ են պահպանվել մի շարք ռուս պատմաբանների և հետազոտողների մոտ: Այս առումով ուշագրավ է ռուս պատմաբան և հնագետ Ի. Ջաբելինի “Домашний быт русских царей в 16 и 17 столетиях” (М., 1915) և “Домашний быт русских цариц в 16 и 17 столетиях” (Москва, 1918) աշխատությունները, որոնցում Սալթանովին վերաբերող բավականին արժեքավոր նյութեր կան: Արժեքավոր է նաև Ի. Գրաբարի աշխատությունը, որը բավականին բարձր է գնահատել Բոգդան Սալթանովին: Նա իր աշխատության “Семон Ушаков и его школа” գլխում առանձնացնում է Ուշակովի դպրոցի հետևորդներին: Ըստ նրա, 4-րդ խումբը «բաղկացած է, ըստ էության, Սալթանովից, Բեզմինից և Պոզնանսկուց: Նրանք ուշակովյան դարաշրջանում սրբանկարչության պատմության մեջ համարվում են «ծայրահեղ ծախ»»¹¹:

Բոգդան Սալթանովի ողջ գործունեությունն ի մի բերողն ու նրա ստեղծագործության առաջին գնահատողն եղավ Ա. Ուսպենսկին, որն առաջին անգամ արվեստաբանական գրականության մեջ ամբողջացնում է Սալթանովի մասին գոյություն ունեցած տվյալները: 1907 թ. հրատարակած “Царский живописец дворянин Иван Иевлевич Салтанов (“Известия общественных наук”, Ереван, 1948, N 4) հոդվածում: Նույն հոդվածը, որոշ կրճատումներով, Ուսպենսկին տեղավորում է “Царские иконописцы и живописцы 17 века” քառահատոր աշխատության 2-րդ հատորում (Москва, 1910), որը 17-րդ դարի ռուս սրբանկարիչների ու նկարիչների ծավալուն բառարան է¹²: Մի շարք հոդվածներում Բ. Սալթանովի դերն ու նշանակությունը գիտական հիմնավորումով է ներկայացրել նաև արվեստաբան Ն. Մոլևան:

Բացի այս հետազոտություններից և արխիվային նյութերից Հ. Ղուկասյանը օգտվել է նաև Խ. Ա. Ջուղայեցու «Պատմութիւն պարսից» աշխատությունից. այն

¹⁰ Армянско - русские отношения в 17 веке, т. 1, Ереван, 1953 г., ст. 21-76.

¹¹ Грабарь И., История русского искусства, т. 1, Москва, 1953 ст. 443. (“состоит в сущности Салтанова, Безмина и Познанского. Они являются “крайней левой” в истории русской иконописи Ушаковской эпохи”).

¹² Տե՛ս Ղազարյան Մ., Ոսկանյան Վ., Բոգդան Սալթանով, Երևան, 1986, էջ 17:

հավաստի պատմական տվյալներ է հաղորդում վեպի մեկ այլ հերոսի՝ տաղանդավոր նկարիչ, աստվածաբան Հովհաննես Մրջուզի մասին:

Այս նյութերը բավական չէին վիպասանի համար՝ ստեղծելու բազմաբովանդակ, սյուժետային հետաքրքիր դեպքերով ու բնավորություններով լեցուն վեպ: Բնականաբար, Ղուկասյանը, բացի վերոնշյալ նյութերից ու վավերական տեղեկություններից, մեծապես հենվել է նաև ստեղծագործական երևակայության վրա՝ միաձուլելով իրականն ու երևակայականը:

2.4. Կերպարային համակարգը Հ. Ղուկասյանի «Բոզդան Սալթանով» պատմավեպում

«Ոսկան Երևանցի» և «Բոզդան Սալթանով» պատմավեպերը բազմակերպար, բազմաճյուղ կառույցներ են: Այս վեպերում սյուժետային ծավալումները զարգանում են բազմաթիվ ուղղություններով՝ խիստ կենտրոնացում պահանջելով ընթերցողից: Առկա են և՛ մանրակրկիտ նկարագրություններ, և՛ զգացմունքային, և՛ խոհական, և՛ պատմագիտական բնույթի շարադրանքներ, որոնց շնորհիվ անընդհատ պահպանվում է ընթերցման լարվածությունը՝ հակասությունների շնորհիվ առավել ընդգծելով արծարծվող հարցերն ու հասարակական-քաղաքական վիճակները: Բոզդան Սալթանովի կերպարին անդրադառնալիս հնարավոր չէ զուգահեռ չտանել Ոսկան Երևանցու կերպարի հետ: Թե՛ Բոզդան Սալթանովը և թե՛ Ոսկան Երևանցին հայոց մշակույթի նշանավոր դեմքերն են: Իսկ հոգևոր մշակույթը ազգերի գոյության պահպանման կարևոր միջոց էր և օտար զավթիչներին դիմագրավելու կարևոր զենք էր հայ ժողովրդի համար: Այս առումով հայ ժողովրդի պատմության մեջ նշանակալի դեր ունի Աստվածատուր Սալթանյանի կերպարը: Հ. Ղուկասյանը «նրա կերպարի անհատականությամբ արտահայտում է այն պատմափիլիսոփայությունը, որ պետականությունը կորցրած հայ ժողովուրդը երբեք չի դադարել մտածել իր անկախությունն ու պետականությունը վերակերտելու գաղափարից, ազգային-ազատագրական մաքառումների բազմադարյան ձգտումներով, մշակութային արժեքների արարումներով մշտապես պայքարել է հանուն այդ սրբազան նպատակի»¹³: Բոզդան Սալթանովի հոգում և մտքում անընդհատ փայլատակում են մերթ հայրենիքի ազատագրման սուրբ տենչանքներ, մերթ կորցրած սիրո անշեջ մորմոքը և առավել սաստկացած՝ պանդխտական կարոտը: Նույնը տեղի էր ունենում նաև Ոսկան Երևանցու հետ: Բայց «սուրբ գործը» առաջ է մղում նրանց, ստիպում դիմանալ բոլոր դժվարություններին: Բոզդանի հոգում միշտ վառ մնաց Terra Armena-ն (մուգ դեղնավուն կամ բաց դարչնագույն փոշեներկ) «իր դեղնակարմիր կայծկլտուքներով,

¹³ Արզումանյան Ա., Արդի հայ վեպը, հ. 5, Երևան, 2004, էջ 271:

ինչպես մշտաբորբոք կրակը մոխրի տակ՝ այդ գորշ, անորոշ ու անշարժ դարձնում հանուն հայրենիքի և՛ գոյատևման, և՛ վրձնի հայոց»:¹⁴

Վեպի նախաբանում վիպասանը բացատրում է, որ «Terra Armeniae-ն, Terra Erminiae-ն հայկական հողն է, Հայաստանը, որին որդիաբար սիրեց ու մինչև իր պանդխտական կյանքի վերջը կարոտեց Արվեստի զոհասեղանին իր հայկական լուսնաներդրած նկարիչ Աստվածատուր Սալթանյանցը՝ Բոգդան Սալթանովը»: (էջ 3)

Աստվածատուր Սալթանյանցի համար կարևոր էին Նոր Ջուղայում անցկացրած իր տարիները: Ու թեև Նոր Ջուղայում տեղի ունեցող իրադարձություններով է սկսվում վեպը, սակայն այս տարիներին հեղինակը հաճախ անդրադառնում է հետադարձ հայացքով՝ վերուշի ձևով:

Այս ենթագլխում ցույց է տրվում Բոգդան Սալթանովի կերպարի ամբողջական վերլուծությունը՝ ընդգրկելով Նոր Ջուղայում ապրած տարիներից մինչև նրա՝ ռուսական միջավայրում հայտնվելու և ողջ կյանքն այնտեղ անցկացնելու կյանքի տարիները՝ զուգակցելով իրեն շրջապատող մյուս արվեստագետների և այլ կերպարների վերլուծություններով:

2.5. Հ. Ղուկասյանի «Դեռ սպասում են» պատմական վիպակը

«Ոսկան Երևանցի» և «Բոգդան Սալթանով» պատմավեպերից բացի Հ. Ղուկասյանը գրել է նաև 11-րդ դարի 40-50-ական թթ. իրադարձություններին վերաբերող՝ բյուզանդա-թաթարական լծի դեմ Վասպուրականի մղած ազատագրական պայքարն արտացոլող «Դեռ սպասում են» պատմական վիպակը:

Այս ենթագլխում հիմնավորվում է վիպակի պատմական հիմքը, տրվում է կերպարների համապարփակ վերլուծությունը: Ս. Արզումանյանը ճիշտ է նկատում, որ «թեև Հ. Ղուկասյանը ավելի շատ միտված է մշակութային գործիչների կյանքը ներկայացնելուն, սակայն «Դեռ սպասում» են պատմավեպը կարծես նախասիրությունից շեղում եղավ, թեկուզ հեղինակը լայն տեղ է տվել Նարեկացուն, միջնադարյան մեր տաղերին, հայ պատմիչներին, մասնավորապես Մատթեոս Ուռնայեցուն ու նրա «Ժամանակագրությանը»:¹⁵

Վիպակի գաղափարը ամփոփվում է այն պարզ ճշմարտության մեջ, որ բոլոր ճանապարհները բերում են դեպի հայրենիք, ու հայրենասիրությունն է այն հզոր գեները, որին պիտի ապավինի հայ ժողովուրդը:

¹⁴ Ղուկասյան Հ., Ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1990, էջ 80:

¹⁵ Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, հ. 3, Երևան, 1986, էջ 198:

Այս առումով վիպակն ունի արդիական նշանակություն: Այն կարծես կոչ լինի բոլոր այն հայերին, որոնք օտար ավերում են գտնվում նրանք պետք է գիտակցեն, որ վճռական պահին հարկ է լինել հայրենիքի կողքին:

Հեղինակը Հավատում է Հայոց Մեծ Վերադարձին ու հայ ժողովրդի ապագային. չնայած փորձանքներին՝ դեռ սպասում են, դեռ հավատում են Մեծ Վերադարձին...

Չնայած ասելիքի խորությանն ու կարևորությանը՝ Հ. Ղուկասյանի այս վիպակը, սակայն, մեծ ընդունելություն չունեցավ ու մեծ չափով զիջում է «Ոսկան Երևանցուն» և «Բոգդան Սալթանովին» իր գեղարվեստական մակարդակով, գրական առաջադրված հիմնախնդիրների լուծման խորությամբ, կերպարավորման համակարգով: Այնուամենայնիվ, վիպագիրը վերստին մեկ քայլ առաջ է գնում իր ստեղծագործական որոնումներում:

2.6. Հ. Ղուկասյանի՝ պատմական թեմայով գրված պատմվածքները

«Ամեն մի գրողի համար պարտադիր է հոգեբանորեն վերափոխվելու և իր նոր նյութին համապատասխանող արտահայտչական – ոճական բանալիներ հայթայթելու հատկությունը: Հովհ. Ղուկասյանն ունի այդ թանկագին հատկությունը»¹⁶: Այս հատկանիշի առկայությունը գրողի մոտ ևս մեկ անգամ փաստում են նրա պատմվածքները: Հատկապես առանձնանում են նրա՝ պատմական թեմայով գրված պատմվածքները, որոնցում կրկին երևում է նրա նախասիրությունը հայ միջնադարի հոգևոր-մշակութային հարստությունները վերարժարծելու, դրանց միջոցով արդիական գաղափարներ քարոզելու ջերմ ցանկությունը: Այդպիսիք են նրա՝ հոգևոր-մշակութային գործիչներին՝ Գրիգոր Նարեկացուն («Վարդն ի շրթանց կաթեր...»), Ֆրիկին («Հարգա քաղաքի վշտահար երգիչը»), Մխիթար Հերացուն («Հզոր իմաստությամբ»), նշանավոր քարեգործ Վեցիկ վարդապետին («Շարեցին, մորաքույր, շարեցին...»), «Ազդարարի» խմբագիր Հարություն Շմավոնյանին («Առաջին բաժանորդը»), Մեսրոպ Թաղիադյանին («Տեր, կեցո դու զհայս») նվիրված պատմվածքները:

Ղուկասյանի նպատակը մեկն է. նա ներկայացնում է այն կարևոր գաղափարը, որ հայ ժողովուրդը ոչ միայն ազատագրական կռիվով ու պայքարով է պահպանել իր գոյությունը, այլև հոգևոր արժեքներով, որի հաջողմանը նպաստել են վերոհիշյալ հոգևոր-մշակութային գործիչները:

Այս ենթագլխում անդրադարձ է կատարվում նշված պատմվածքներից յուրաքանչյուրի վերլուծությանը ամենայն մանրամասնությամբ:

¹⁶ Ղուկասյան Հ., Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1972, էջ 9:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՈՒԿԱՍՅԱՆԸ ՄԱՆԿԱԳԻՐ

Ատենախոսության 3-րդ գլուխը նվիրված է հետպատերազմյան հայ մանկապատանեկան արձակում Հ. Ղուկասյանի՝ որպես մանկագրի ձեռքբերումներին և ստեղծագործություններին: Մանրամասնորեն վերլուծվել է «Փոքրիկ վրիժառուներ», «Հասանի հիշատակարանը» վիպակները՝ թե՛ կերպարային, թե՛ գեղարվեստական, թե՛ գաղափարական դիտակետերից:

Նախ և առաջ առանձնացնենք «Փոքրիկ վրիժառուներ» վիպակը, որը մանկապատանեկան լավագույն գրքի համամիութենական մրցանակաբաշխությունում արժանացել է երրորդ կարգի մրցանակի, լույս տեսել նաև ռուսերեն:

«Փոքրիկ վրիժառուներ»-ի հիմնական գեղարվեստական խնդիրներն են՝ ճշմարտացիորեն ներկայացնել օտարության մեջ ապրող երեխաների առօրյան, նրանց ծանր կենսապայմաններն ու պայքարը անարդարությունների դեմ. գրողը հաջողությամբ է լուծել իր առջև դրված այս խնդիրները:

«Փոքրիկ վրիժառուներ»-ի գլխավոր հերոսը փոքրիկ Հասանն է, որի ողբերգական պատումով էլ սկսվում է վիպակը. նրա կերպարի միջոցով ընթերցողի առջև քայլ առ քայլ զձագրվում են Իրանի անապատան երեխաների ծանր կյանքի, դառը մանկության պատկերները: «Ես հագիվ տասը տարեկան էի, երբ հայրս մեռավ... Այսպիսի ողբերգական սկիզբ ունի վիպակը: Հասանը շարունակում է. «Հայրս մեռավ ոչ այնպես, ինչպես առհասարակ մեռնում են մարդիկ: Նա մեռավ մեծահարուստ վաճառական Թեյմուր խանի ներքնահարկ պահեստի աստիճանների վրա, քաթանի ծանր հակի տակ ջարդելով ողնաշարը»:¹⁷

Կարճ ժամանակ անց մեռնում է նաև մայրը: Վիպակի գործողությունների հետագա զարգացման մեջ կարևոր են նաև մոր վերջին խոսքերը, նրա հորդորն ու պատգամը որդուն. «Լինել հորդ պես, խոսք տուր լինել այնպես, ինչպես հայրդ էր: Հարբեցող չես լինի, թոթախաղով չես տարվի, չես վիրավորի բարի մարդկանց, կլինես աշխատասեր... Եվ ավելացնում են, եղի՛ր վրիժառու, մեր թշնամիներին չներե՛ս...»: (էջ 18)

Մի կողմից մարդասեր, ազնիվ, բարի լինելու կարևորագույն ձգտումը՝ սերմանելու որդու դաստիարակության, մյուս կողմից՝ ոտնահարողներից վրեժ լուծելու պատգամը... Հենց այս հակադրությունն էլ դառնում է Հասանի կերպարի

¹⁷ Ղուկասյան Հ., Փոքրիկ վրիժառուներ, Երևան, 1979, էջ 5:

* Այսուհետ վիպակի մեջբերումների էջերը կտրվեն վերևում:

զարգացման էական կողմը՝ միևնույն ժամանակ պատկերացում տալով, թե որն է «վրիժառու» լինելու իրական էությունը: Քայլ առ քայլ Հասանի կերպարի մեջ ձևավորվում է ապստամբության ոգին, շահատակողներից վրեժ լուծելու, «վրիժառուի» ճանապարհը ընտրելու նպատակը: Հեղինակն այն սահուն ու հետաքրքիր անցումներով է ներկայացնում, նույնիսկ ընթերցողի համար աննկատելիորեն: Ուստա Սուլեյմանի մաղթանքը՝ կյանքում ուժեղ լինելու, Հասանի համար դառնում է ուղենիշ, ազդում նրա կյանքի ողջ հետագա ընթացքի վրա: Այսինքն՝ նա ազատ կյանքի է ձգտում, լուսավորչական գաղափարներով և ոչ խավարամիտ ապրելու կյանքով, հեռանկարը արդեն խմորված էր և հասունանում էր հետզհետե կյանքը մտնող Հասանի աշխարհայացքում:

Պատանի ընթերցողի համար վիպակի գործողությունները պահպանում են իրենց դիթամը՝ հազեցած արկածախնդրություններով: Մի արկածախնդրության հետևանքով էլ Հասանը դառնում է «վրիժառու» խմբի անդամը: Նոր վրիժառուների ներգրավումը վիպակը դարձնում է առավել ընդգրկուն՝ համալրված այն հերոսներով, որոնց կյանքը նետել էր վրիժառու դառնալու ուղին: Ստեղծագործության միջոցով Հովի. Ղուկասյանը երեխաներին սովորեցնում է նաև բազմաթիվ բարոյական արժեքներ, որոնցից մեկն էլ աշխատելու ձգտումն է:

Ոստիկաններից փախչելով՝ Հասանը հայտնվում է անապաստանների խմբի մեջ: Հենց այստեղ էլ տեղի է ունենում գաղափարների բախումը երեխայի գիտակցության մեջ: Նա հիշում է, որ պետք է ապրել հալալ աշխատանքով, չվնասել մարդկանց, բայց անապաստան այս երեխաները նրան սնունդ էին տալիս, որը «թոցրել են սայլերի վրայից, ուժով...»: Մի կողմից հոր պատգամը՝ կյանքում ապրել ազնիվ աշխատանքով, մյուս կողմից անապաստանների պարագլխի՝ Կուլիի բացատրությունը. «Մենք վրեժ ենք առնում չար մարդկանցից, մեր խումբը կոչվում է «վրիժառու»»: (Էջ 33) Այս պահից վիպակի գործողությունների կենտրոնում հայտնվում են «վրիժառուների» գործողությունները, նրանց կյանքը: Նրանք գիշերելու մշտական տեղ չունեն, նրանք պտտում են մուօ, ամայի փողոցներով, գիշերապահները նրանց միշտ հետապնդում են, նրանցից շատերին «գող» անվան տակ բանտ են նետում:

Հասանի կերպարին զուգահեռ էական ու կարևոր է նաև մեկ այլ կերպար՝ վրիժառուների պարագլուխը՝ Կուլին: Այս կերպարի զարգացումը շատ դինամիկ է, ճկուն, այն իր մեջ ներառում է «վրիժառու» լինելու ողջ իմաստը: Կուլիին տեսնում ենք «վրիժառուների» բոլոր արկածները ղեկավարելիս, ինչպես նաև շատ հաճախ պատիժները իր վրա վերցնելու պարտավորություններով: Այստեղ հեղինակը չի բացատրում, թե ինչու է Կուլին դարձել անապաստան: Սակայն այս հարցի պատասխանը գրողը տալիս է «**Հասանի հիշատակարանը**» գրքում, որը համարվում է «Փոքրիկ վրիժառուների» Բ գիրքը:

Թե՛ «Փոքրիկ վրիժառուներ» և թե՛ «Հասանի հիշատակարանը» վիպակներում Կուլիի կերպարը զարգանում է անընդհատ հաջողությունների, վերելքների և վայրէջքների միջով անցնելու ուղիով:

Անչափ կարևոր է խմբագիր Ֆեդաքարի կերպարը: Ինչո՞ւ բանտախցում հայտնված «վրիժառուներին» առավել տանելի եղան բանտի չարչարանքները: Դեպի լուսավորություն տանող ուղին է միայն մարդուն համբերություն և ուժ տալիս՝ դիմանալու դժվարություններին: Խմբագիր Ֆեդաքար՝ ահա այն անձը, որը երևան է գալիս որպես կրթություն մատնանշող ուղի: Ժողովրդավարական պետություն ստեղծելու, կրթյալ հասարակություն ունենալու կարևոր ցանկությունն է նկատվում Ֆեդաքարի գաղափարախոսության մեջ:

Անարդարությունների դեմ պայքարելու համար պետք է լինել կրթված և ստեղծել բարեկեցիկ երկիր՝ ահա հեղինակի գաղափարական ելակետը: Ֆեդաքարի միջոցով պայքարի ոգի սերմանելով հերոսների մեջ՝ հեղինակը մեկ քայլ առաջ է տանում կերպարների հոգեբանական և գիտակցական ընկալումը աշխարհի և կյանքի վերաբերյալ:

«Փոքրիկ վրիժառուներ»-ի պայքարը ընդամենը աշխատողների՝ ֆաշիզմի, քաղցի դեմ մեծ պայքարի ու հանուն հարատև խաղաղության ճնշված Իրանի առաջադեմ ժողովուրդի պատերազմի մի մասն է»:¹⁸

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒՑ

Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ՝ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԵՆՔՈՎ ԳՐՎԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս գլխի ենթագլուխներում փորձ է արվում վերլուծել Հ. Ղուկասյանի՝ առակի, հեքիաթի և բալլադի ժանրերով գրված ստեղծագործությունները:

4.1. Հովհաննես Ղուկասյանի առակագրությունը հայ միջնադարյան առակագրության համատեքստում

Հ. Ղուկասյանի գրական ժառանգության մեջ տեղ են գտել նաև առակի, հեքիաթի և բալլադի ժանրերը: Թեև թվով դրանք սահմանափակ են, սակայն տեղին է

¹⁸ Ершов Г., Книга о дружбе. "Дружные ребята", М., 1951, N 8, с. 31-32. (Борьба "Маленьких мстителей" это лишь одна частичка большой борьбы, трудящихся с фашизмом, борьбы против голода и войны за прочный мир, которую ведут передовые люди угнетенного Ирана").

անդրադառնալ այդ ստեղծագործությունների գրական արժեքին: Տարդ այս թեմայով ուսումնասիրություններ չեն կատարվել, և առաջին անգամ մենք ենք անդրադառնում այս խնդրին:

Հեղինակը բարոյական տարբեր արժեքներ փորձում է հաղորդել առակների միջոցով, ինչը շատ կարևոր էր իր ապրած ժամանակներում և հետագա սերունդների համար: Ինքը հեղինակը շատ է կարևորում առակի նշանակությունն ու սիրված լինելը.

Գիտեմ՝ սիրում եք առակ,
Պայմանով պարզ ու արագ,
Որ Ձեր սիրած տոներին
Սեղանի շուրջ՝ թոնիրին,
Պատմեք, հիշեք գրողին,
Առակի պարկ կրողին:¹⁹

Հովհաննես Ղուկասյանի հեղինակած առակների յուրահատկությունն այն է, որ դրանք գրված են չափածո և չունեն բարոյախրատական վերջաբան. դրանցում բարոյախրատական իմաստը ընկալվում է: Նրա առակների հերոսները կենդանիներն են, իրերը և մարդիկ: Դրանցում արծարծված են կյանքի ամենատարբեր խնդիրները: Այսպես, օրինակ, «Ճանճն ու մեղուն» առակը շատ խորիմաստ է: Ճանճը պարծենում է մեղվի մոտ, թե ինքը մեծ դիրքի է հասել, քանի որ «սենյակներում, դահլիճում և կամ պարտեզի լճում, սեղանների վրա ճոխ պատառ եմ փնտրում հաջող»: Դա էլ բավական չէ՝ մեղվին մարդու կողմից վարձված սև հնձվոր է անվանում՝ ավելացնելով այն, թե՛

Մեղրը քո ժողոված
Իմ կերակուրն է գոված...(էջ 16)

Ժրաջան մեղվի իմաստուն պատասխանը հետևյալն է՝ իր արժեքը կարող են գնահատել միայն խելացիները և աշխատանքի հարգը գիտակցողները, և ինքը սպեղանի է բուրդի համար: Այս առակը սովորեցնում է ապրել սեփական քրտինքով, անդուլ աշխատելով և ինքնագովեստով ու մեծամիտ հայտարարություններով հանդես չգալ: Նմանատիպ գաղափար է ընկած նաև Վ. Այգեկցու «Եզն ու ձին» առակի հիմքում:

Ղուկասյանի հեղինակած առակների թեմաները կան թե՛ հայկական ժողովրդական առակներում, թե՛ հայ առակագիրների մոտ: Դրանք մեջբերվել են ատենախոսության մեջ համեմատական քննությամբ:

¹⁹ Առակներ և բանաստեղծություններ Հովհ. Ղուկասյանի, Թավրիզ, 1944, էջ 26:

Հ. Ղուկասյանը դիմեց առակի գրական տեսակին, քանի որ կյանքում արատավոր ու խոցելի երևույթները շատ էին, ու դրանք բարձրաձայնելը հեղինակի համար էական էր:

4.2. Հեքիաթներն ու բալլադները Հովհ. Ղուկասյանի ստեղծագործության մեջ

Հ. Ղուկասյանի գրական ժառանգության մեջ առանձին տեղ են զբաղեցնում հեքիաթները, որոնք հեղինակը զետեղել է «Հեքիաթներ և բալլադներ» խորագրի ներքո: Նկատելիորեն այս երկու ժանրերին բնորոշ առանձնահատկությունների միախառնում կա որոշ ստեղծագործություններում. որոշակիորեն չի կարելի դրանք անվանել հեքիաթ կամ բալլադ: Մի մասը հեղինակն անվանել է հեքիաթ (փակկազձեռում նշել է), իսկ մեկ այլ մասը, ենթադրվում է, որ հեղինակի կարծիքով բալլադներ են, քանի որ նա հստակորեն չի տվել դրանց ժանրային անվանումը, և իրենց բնույթով դրանք ավելի մոտ են բալլադի ժանրին:

Հովհ. Ղուկասյանի հեքիաթները գրված են չափածո. դրանցից և ոչ մեկը չի սկսվում հեքիաթի գրական տեսակին բնորոշ «Լինում է, չի լինում», «Ժուկով-ժամանակով» կամ «Կար, չկար» բառերով: Սակայն դրանցում պահպանված են հեքիաթի մյուս հատկանիշները՝ բարու հաղթանակ, ժամանակի ու տարածության անորոշություն և այլն:

Հ. Ղուկասյանի հեքիաթներում և բալլադներում ամփոփվում են բարու, գեղեցիկի, վեհի, մարդկային բարձր արժանիքների կարևորության և հոգևոր արժեքների առաջնայնության գաղափարները: Հ. Ղուկասյանն իր հեքիաթներով ու բալլադներով մեկ քայլ առաջ է գնում իր ստեղծագործական որոնումներում:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ «ՐԱՖՖԻ» ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխում ցույց է տրվում, թե որքան ջանասիրաբար է ուսումնասիրել Հ. Ղուկասյանը հայ մեծ գրող Րաֆֆու կյանքը և նրա ապրած ժամանակաշրջանը:

Հ. Ղուկասյանի ստեղծագործական որոնումների վերջնակետը եղավ «Րաֆֆի» կենսագրական վիպերգությունը, որի առաջին մասը միայն հասցրեց գրել վիպասանը՝ այն թողնելով ձեռագիր վիճակում: 71 տարեկանում անսպասելիորեն կյանքի թելը կտրած գրողը, լինելով Րաֆֆու վեցերորդ քրոջ՝ Ալմաստի թողը, ողջ կյանքում իր հոգում կրում էր այս թեման՝ հարցին մոտենալով ամենայն պատասխանատվությամբ և գուրգուրանքով: ԱՄՆ-ում՝ Լոս Անջելեսում, 2002թ. Հ. Ղուկասյանի որդին՝ Արամը, հրապարակեց այն:

Ղուկասյանի այս գիրքը պետք է բաղկացած լիներ մի քանի գրքից և ընդգրկելու էր Ռաֆֆու կյանքի ամբողջական պատկերը: Առաջին գրքում, որը մեր ուսումնասիրության նյութն է, տրված է մանկության ու պատանեկության շրջանը՝ 15 տարին՝ սկսած ծննդից՝ 1835թ. մինչև 1850թ.: Այս ստեղծագործությունը գրականագետների կողմից ուսումնասիրված չէ, միայն Ս. Արզումանյանն է մի թեթև ակնարկով անդրադարձել՝ վերլուծելով, սակայն, միայն նախաբանը:

Վեպի նախաբանից արդեն հստակորեն ուրվագծվում է Հ. Ղուկասյանի՝ այս վեպը գրելու ոգեշնչման աղբյուրը: «Ես լսում էի, - գրում է նա, - հավատավորի նրա ջերմ խոսքը, և հոգով նորից ես այնտեղ էի Սալմաստի դաշտում, իմ նախնիների և աղոթքի պես հուշամրմունջ դարձած հարազատներիս սովերների հետ և ամայացած Մեծ Հայաստանի սուրբ տարածքներում, որոնց վրայով, սուրբ ազատության ջախը վեր բռնած, հայոց տաժանքի մրմուռը սրտում եկավ ու անցավ մեր ժողովրդի խորհրդավոր ու հարատև Ոգու Մեծ Առաքյալը՝ Ռաֆֆի անունով»:²⁰

Բազմաթիվ բանասիրական հետազոտություններ կան Ռաֆֆու կյանքի վերաբերյալ՝ հարուստ փաստագրական նյութերով, սակայն ինչպես Խ. Սամվելյանն է փաստում, «Ռաֆֆու կյանքի վաղ շրջանի մասին հասած տեղեկությունները սակավ են, երբեմն էլ հակասական: Տակավին հիմնավոր պարզված չեն նրա մանկության, պատանեկության, երիտասարդության ու սկզբնական կրթությանը վերաբերող հարցերից շատերը»:²¹ Ուստի, Ռաֆֆու կյանքի վաղ շրջանի համար այս նյութը տալիս է փաստացի տեղեկություններ, ինչը պատկերում է նաև Ղուկասյանը՝ գեղարվեստական կաղապարների մեջ դնելով այն:

Հ. Ղուկասյանի սույն վեպը բաղկացած է 2 մասից: Փայաջուկի նկարագրին զուգահեռ՝ գրողը ներկայացնում է Ռաֆֆու գերդաստանի պատմությունը, ինչպես նաև առավել ցայտուն ընդգծելով Ռաֆֆու հոր՝ մելիք Միրզաբեկի կերպարը:

Ղուկասյանի այս փորձը՝ ներկայացնելու Ռաֆֆու կյանքը, թեև տեղեկություններով շատ հարուստ է, սակայն գեղարվեստական տեսանկյունից կատարյալ չէ, սակայն, միևնույն ժամանակ, ընթերցողի համար ծանծրալի չէ: Հեղինակը այն մշակման չի ենթարկել հանկարծահաս մահվան պատճառով:

²⁰ Ղուկասյան Հ., Ռաֆֆի, Լոս Անջելես, 2002, էջ 3-4:

²¹ Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում, Երևան, 1986, էջ 11:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հովհաննես Ղուկասյանի ստեղծագործությունը» ատենախոսության ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

1. Ընդհանուր առմամբ Հովհ. Ղուկասյանի գրական ժառանգությունն ավելի լայն ու ընդգրկուն ներկայացված է իր արձակում, իսկ գրողի ողջ **բանաստեղծությունը** նրա սրտի խոսքն է աշխարհին: Այդ բանաստեղծությանը բնորոշ են հետևյալ թեմատիկ բաժանումները՝ հայրենադարձություն, հայրենասիրություն, որոնք նրա բանաստեղծության հիմնական մոտիվներն են, հայրենական պատերազմ, սիրո թեմատիկան, ներաշխարհը ներկայացնող բանաստեղծություններ: Այս ամբողջին բնորոշ է մեկ ընդհանրություն. գրեթե բոլոր բանաստեղծություններն ունեն կենսագրական բնույթ և ներշնչված են անձնական ապրումներով: Իր բանաստեղծություններով Հովհ. Ղուկասյանը նոր խոսք չի ասել հայ քնարերգության մեջ: Նրա ստեղծագործության այդ շրջանը զուտ նախապատրաստում էր հետագա շատ ուշագրավ արձակ գործերի լույս աշխարհ գալուն:
2. Հ. Ղուկասյանը գրել է նաև **առակի, բալլադի, հեքիաթի** և այլ ժանրերով, սակայն դրանք միայն ամբողջացնում են բազմաժանր հեղինակի ստեղծագործությունը, ու նոր որակ և նոր ասելիք չեն բերում գրականությանը: Գլխավորը հեղինակի ձգտումն է կյանքի կարևոր կողմերի՝ բարու, լավի, գեղեցիկի մասին խոսել վերոնշյալ ժանրերի միջոցով ևս, որոնք, սակայն, գեղարվեստական տեսանկյունից կատարյալ չեն և լի են թերություններով:
3. Հովհաննես Ղուկասյանի **մանկագրությունն** ավելի շուտ ունի ճանաչողական և պատմական արժեք: Նրա մանկապատանեկան գործերում պատկերված է նախքան երկրորդ համաշխարհային պատերազմն ընկած ժամանակահատվածի Իրանի կյանքի հետամնացությունը, որն իր կնիքի առավել երևացող դրոշմն էր դրել աշխատավոր ընչազուրկ խավի վրա: Հատուկ ձևով ներկայացված է անապաստան երեխաների դառն ու դաժան ճակատագիրը: Այս պատկերները հակադրվել են խորհրդային կարգերում որբ երեխաների նկատմամբ հոգատար վերաբերմունքի իրողությանը, որը հմուտ գրողի ապրած հետպատերազմական շրջանի խորհրդային գրականության գաղափարական պահանջն էր: Երիտասարդ տարիներին ապրելով Իրանում՝ Հ. Ղուկասյանը քաջաձանոթ

էր այդ երկրի կյանքին և Խորհրդային Հայաստան ներգաղթելուց հետո նա պատկերեց մանուկների կրթության և դաստիարակության այն բացերը, որոնք տեսել էր իր ծննդավայրում և որոնք չտեսավ Խորհրդային Հայաստանում:

4. Հովհաննես Ղուկասյանն ունի ուշագրավ ձեռքբերումներ **պատմավիպասանության** մեջ. դրանք մեծ ավանդ և դեր ունեն են հայ գրականության պատմության մեջ:

- **«Ոսկան Երևանցի»** պատմավեպի ուսումնասիրությունը հավաստում է, թե որքան պատասխանատու է եղել Հովհաննես Ղուկասյանը «Ոսկան Երևանցի» պատմավեպը գրելիս: Նա երկար ժամանակ հավաքել է պատմական նյութը այդ մեծ հայի մասին, որը հեռավոր Ամստերդամում՝ օտարության մեջ, առաջ է մղել հայ մշակույթը՝ տպագրելով Աստվածաշունչը, Առաքել Դավրիժեցու «Հայոց պատմությունը» և ուրիշ ազգապահպան գրքեր: Դիմելով պատմությանը, վերհանելով հայ մեծ տպագրիչի կերպարը՝ Հ. Ղուկասյանն առանձնացնում է էականը. ազգային գոյության մեծ նվիրումի գաղափարի մեջ պետք է որոնել միակ ճիշտ ուղին: Գրողի մոտ հաջողվել է այնպես կերտել գլխավոր հերոսի կերպարը, որ նրա միջոցով ասես ընդհանրացվել է հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ձգտումների դարավոր փորձը:
- **«Բոգդան Սալթանով»** պատմավեպը նույնպես Հովհաննես Ղուկասյանի գեղարվեստական կարևորագույն ձեռքբերումներից է: Այն ներկայացնում է 17-րդ դարի հայ-ռուսական փոխհարաբերությունների կարևոր դրվագներ: «Բոգդան Սալթանով» վեպն աչքի է ընկնում իր վավերականությամբ և հենց դրա համար էլ ունի ճանաչողական մեծ արժեք:
- **«Դեռ սպասում են»** վիպակը զիջում է «Ոսկան Երևանցուն» և «Բոգդան Սալթանովին» իր գեղարվեստական մակարդակով, գրական առաջադրված հիմնախնդիրների լուծման խորությամբ, կլուծման խորությամբ, կերպարավորման համակարգով: Այնուամենայնիվ, վիպագիրը վերստին մեկ քայլ առաջ է գնում իր ստեղծագործական որոնումներում:
- Ուսումնասիրությունը ի ցույց հիմնավորում է, որ հաջողված են նաև Հ. Ղուկասյանի **պատմական թեմայով գրված պատմվածքները**, որոնք, սակայն, նույնպես ունեն նկատելի թերություններ: Սակայն փաստ է, որ Հովհաննես Ղուկասյանին խորապես հուզողը հայ ժողովրդի

պատմական անցյալի հերոսական դրվագներն են և դրանք կերտող հերոսական կերպարները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿԿԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Կերպարային համակարգը Հ. Ղուկասյանի «Ոսկան Երևանցի» պատմավեպում, «Հայագիտական հանդես», N4(34), Երևան, 2016, էջ 83-94:
2. Հ. Ղուկասյանի առակագրությունը հայ միջնադարյան առակագրության համատեքստում, «Հայագիտական հանդես», N1(25), Երևան, 2014, էջ 134-145:
3. Մանկագրությունը Հովհաննես Ղուկասյանի ստեղծագործության համատեքստում, «Հայագիտական հանդես», N 4(38), Երևան, 2017, էջ 114-126:
4. Ոսկան Երևանցու կերպարը Հովհաննես Ղուկասյանի համանուն վեպում, «Ոսկան Երևանցի. ճամփորդություն հայ տպագրության քառուղիներով» գիտաժողովի նյութերից, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան, 2016, էջ 8-17:
5. Պատմական հիմքը Հ. Ղուկասյանի «Բոգդան Սալթանով» վեպում, «Գրականագիտական հանդես», Ժ2, Երևան, 2015, էջ 142-151:
6. Պատմական հիմքը Հ. Ղուկասյանի «Ոսկան Երևանցի» պատմավեպում, «Հայագիտական հանդես», N2(30), Երևան, 2015, էջ 87-96:

Ануш Мушеговна Степанян

Творчество Ованеса Гукасяна

10. 01.02 – По специальности «Армянская литература новейшего периода»

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук

Защита состоится 20-го ноября 2020 года, в 12³⁰, в профессиональном совете Литературоведения ВАК 003, действующем при Институте литературы им. М. Абеяна НАН РА

Адрес: Ереван, ул. Григора Лусаворича 15

Резюме

Диссертация посвящена исследованию творчества Ованеса Гукасяна, многожанрового автора XX века, чья прожитая жизнь сыграла большую роль в направлении его творчества, в выборе тем, в частности, в широком охвате патриотизма. Репатриация в Советскую Армению стала для писателя духовным возрождением, чтобы еще выше оценить Родину и ее роль для каждого армянина, что глубоко укоренилось в его стихах и прозе.

В диссертации сделана попытка выявить автора в жанрах поэзии, художественной литературы, в частности, исторических произведений, рассказов, детской литературы и произведений, написанных на основе фольклора – сказок, баллад, басен.

Изучение творчества Ованеса Гукасяна важно рассматривать в контексте литературных и художественных достижений того времени.

Сделана попытка интерпретировать его, не игнорируя некоторые наблюдения и оценки, сделанные с точки зрения литературноведческого анализа литературных событий того времени (последних очень мало, они не раскрывают автора полностью).

Выбор темы актуален, он восполняет важный пробел, потому что делается попытка не только представить подробное описание литературного наследия О. Гукасяна, но особенно для того, чтобы подчеркнуть фактическую важность его заслуг в историческом повествовании, поскольку, подвергая литературному изображению жизнь известных армянских духовных и культурных деятелей, автор обогащает

армянскую литературу.

Цель диссертации – представить полное творчество Ованеса Гукасяна, показать его литературно-историческую и художественную ценность, а также его роль в современной армянской литературе.

Основная задача исследования – показать не только творчество Гукасяна в целом, но и представить творческие проявления автора в разных жанрах, раскрыть роль и значение его работ в каждом жанре, поскольку исчерпывающая картина того, что хочет сказать мультижанровый автор, отражается в его полном творчестве.

Научная новизна и особенность исследования заключается в следующем: а) впервые детально изучено творчество Ованеса Гукасяна в целом, б) впервые в диссертации произведения каждого жанра писателя рассматриваются в отдельности.

Творчество Гукасяна в целом не изучалось, за исключением наблюдений ряда литературоведов, которые в основном ссылались на исторические романы. Поэтому мы построили наш анализ, пропорционально используя методологию как сравнительной, так и современной литературы.

Диссертация состоит из введения, 5 глав, которые, в свою очередь, состоят из подразделов, списков использованных источников и литературы.

Глава I: «Ованес Гукасян - поэт» представляет анализ поэтического наследия О. Гукасяна, раскрывая автора как начинающего творца, появившегося в литературе, и анализируя его недостатки, поскольку для Гукасяна поэзия – это только начало его литературного пути.

Глава II: «Ованес Гукасян – романист» включает в себя существенную часть его творчества – исторические романы и рассказы, написанные на историческую тему.

Раскрывая суть исторических романов «Воскан Ереванци», «Богдан Салтанов», повести «В ожидании», рассказов, написанных на историческую тему, придается значение основному – почему романист обращается к историческому прошлому, берет героев из исторического и культурного прошлого, какова его цель. Обращаясь к прошлому, к жизни деятелей культуры, автор исторического романа, еще раз передает ту важную истину, что армянский народ сохранил свое существование не только благодаря героическим битвам, военной борьбе, но также благодаря искусству, духовным и культурным ценностям, и тем людям, которые ценили их и пожертвовали ради них своей жизнью, такие как, например, Воскан Ереванци и Богдан Салтанов. Таким же образом автор выбрал главных героев исторических рассказов из средневековых деятелей культуры, ценя их преданность и роль, перенося их в наши дни, показывая путь просвещения и выживания нации.

Конечно же, при написании этих произведений автор использовал множество источников, которые подробно описаны в соответствующей главе.

Глава III: «О. Гукасян – детский писатель», говорит о произведениях и достижениях О. Гукасяна, как детского писателя, в послевоенной армянской детской прозе. Детально проанализированы повести «Маленькие мстители» и «Память Хасана», как с точки зрения персонажей, так и с художественной и идеологической сторон.

Глава IV: «Произведения, написанные на основе фольклора» раскрывает автора Гукасяна в жанрах басни, сказки и баллады в стихах.

Глава V: «Монография «Раффи» О. Гукасяна показывает насколько глубоко изучил О. Гукасян жизнь великого армянского писателя Раффи и эпоху его жизни.

Диссертация завершается заключениями и списком использованной литературы.

Anush M. Stepanyan

The work of Hovhannes Ghukasian

10. 01.02 - Specialization in Modern Armenian Literature

Abstract of thesis for the degree of Candidate of philological sciences

The defense of the thesis will take place on 20th of November 2020 at 12³⁰ o'clock at the HAC 003 of the Professional Council of Literary Studies, operating at the Institute of Literature after M. Abeghian of the NAS of the RA.

Address: Yerevan, Grigor Lusavorich st., 15

Summary

The thesis is devoted to the study of the work of Hovhannes Ghukasian, a multi-genre author of the twentieth century, whose life played a large role in the orientation of his work, in the choice of topics, in particular, in the wide scope of patriotism. Repatriation to Soviet Armenia became a spiritual rebirth for the writer, in order to appreciate even

higher the Motherland and its role for every Armenian, which is deeply rooted in his poetry and prose.

An attempt is made in the thesis to identify the author in the genres of poetry, fiction, in particular, historical novels, stories, children's literature and works written on the basis of folklore: fairy tales, ballads, fables.

It is important to consider the study of Hovhannes Ghukasan's work in the context of the literary and artistic achievements of that time.

An attempt is made to interpret it, without ignoring some observations and assessments made from the point of view of a literary analysis of the literary events of that time (the latter are very few, they do not reveal the author completely).

The choice of the topic is relevant; it fills an important gap, because an attempt is made not only to provide a detailed description of the literary heritage of H. Ghukasian, but especially in order to emphasize the actual importance of his merits in the historical narrative genre, since, by exposing the life of famous Armenian spiritual and cultural figures to a literary depiction, the author enriches Armenian literature.

The purpose of the thesis is to present the complete work of Hovhannes Ghukasian, to show his literary, historical and artistic value, as well as his role in modern Armenian literature.

The main task of the study is to show not only the work of Ghukasian as a whole, but also to present the creative manifestations of the author in different genres, to reveal the role and significance of his works in each genre, since a comprehensive picture of what a multi-genre author wants to say is reflected in his complete work.

The scientific novelty and peculiarity of the research is as follows: a) for the first time, the work of Hovhannes Ghukasian as a whole was studied in detail, b) for the first time in the thesis, the works of each genre of the writer are considered separately.

Ghukasian's work as a whole has not been studied, with the exception of the observations made by a number of literary scholars, who mainly referred to his historical novels. Therefore, we structured our analysis proportionately using the methodology of both comparative and contemporary literature.

The thesis consists of an introduction, 5 chapters, which, in turn, consist of subsections, and lists of used sources and literature.

The Introduction provides a general description of the work, including the main points of the thesis. The subject of the work, its purpose and objectives, the relevance of the topic, scientific novelty and methodology are presented, the history of the issue is reflected.

Chapter I: “Hovhannes Ghukasian as Poet” presents an analysis of the poetic heritage of H. Ghukasian, revealing the author as a novice creator who appeared in literature, and analyzing his shortcomings, since for Ghukasian poetry was only the beginning of his literary path.

Chapter II: “Hovhannes Ghukasian as Novelist” includes an essential part of his work: historical novels and stories written on a historical theme.

Revealing the essence of the historical novels *Voskan Yerevantsi*, *Bogdan Saltanov* and of the story *Waiting*, as well as stories written on a historical theme, the main importance is attached to elucidate why the novelist turns to the historical past, takes heroes from the historical and cultural past, what is his purpose. Turning to the past, to the life of cultural figures, the author of the historical novels, once again conveys the important truth that the Armenian people preserved their existence not only thanks to heroic battles, military struggle, but also thanks to art, spiritual and cultural values, and those people who appreciated them and sacrificed their lives for them, such as, for example, Voskan Yerevantsi and Bogdan Saltanov. In the same way, the author chose the main characters of historical stories from medieval cultural figures, appreciating their dedication and role, transferring them to our days, showing the path of enlightenment and survival of the nation. Of course, when writing these works, the author used many sources, which are described in detail in the corresponding chapter.

Chapter III: “H. Ghukasian is a Children’s Writer”, speaks about the works and achievements of H. Ghukasian as a children’s writer in the post-war Armenian children’s prose. The stories *Little Avengers* and *The Memory of Hassan* are analyzed in detail, both from the point of view of characters, and from the artistic and ideological sides.

Chapter IV: “Works Written on the Basis of Folklore” reveals the author Ghukasian in the genres of fables, fairy tales and ballads in verse.

Chapter V: “The Monograph Raffi” by H. Ghukasian shows how deeply H. Ghukasian studied the life of the great Armenian writer Raffi and the era of his life.

The thesis ends with conclusions and a List of references.

